ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 հոկտեմբերի 2025 թվականի N 253– Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքը և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2025 թվականի հունվարի 10-ի N 5-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի 2025 թվականի հոկտեմբերի 7-ին կայացած նիստի N 17 արձանագրությունը

ո ր ո շ ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված միջոցներից 70 /յոթանասուն/ քաղաքացիների՝ սոցիալական աջակցության նպատակով, հատկացնել միանվագ դրամական օգնություն ընդհանուր 3 550 000 /երեք միլիոն հինգ հարյուր հիսուն հազար/ դրամի չափով՝ համաձայն հավելվածի:
2. Մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարին՝ անկանխիկ, բանկային համակարգի միջոցով ապահովել գումարների վճարումը:

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

2025-10-07 15:42:58 GMT+4
Հավաստված է EKENG-ի կողմից

2025թ. հոկտեմբերի 7
ք.Իջևան